International Olympiad in Informatics 2016
12-19th August 2016
Kazan, Russia
day1_notice

notice
Country: ARM

# Իրականացման մանրամասներ

- Դուք պետք է ուղարկեք ճիշտ մեկ ֆայլ (ֆայլի անունը նշված է խնդրում):
- Ֆայլերը պետք է պարունակեն պահանջվող ֆունկցիաների իրականացումները, որոնք պետք է համապատասխանեն նմուշի տեսքին:
- Ենթածրագրերը պետք է իրենց դրսևորեն այնպես, ինչպես նշված է խնդրում:
- Դուք կարող եք սահմանել և իրականացնել այլ ֆունկցիաներ:
- Ձեր ծրագիրը չպետք է որևէ կերպ օգտագործի ստանդարտ մուտքի/ելքի հրամաններ և չպետք է աշխատի ֆայլերի հետ: Մասնավորապես, ծեր ծրագրի կողմից ստանդարտ ելքում ցանկացած արտածում կբերի SV արդյունքի (security violation – անվտանգության խախտում): Դուք կարող եք արտածել stderr-ում:

# Պայմանավորվածություններ

Խնդիրների տեքստերում օգտագործվում է զանգված բառը, իսկ իրականացման մանրամասների մեջ` `int[]` արտահայտությունը: Կախված ծրագրավորման լեզվից` `int[]`-ի փոխարեն օգտագործվում են հետևյալ տիպերը (պարզության համար բոլորին կանվանենք զանգված)`

- `std::vector<int>` -- C++ լեզվում,
- `int*` -- C լեզվում,
- `array of longint`-- Pascal լեզվում,
- `int[]` -- Java լեզվում:

Իրականացման մանրամասներում օգտագործվում է `int64` արտահայտությունը: Վերջինս կհասկանանք որպես`

- `long long` -- C++/C լեզուներում,
- `int64` -- Pascal լեզվում,
- `long` -- Java լեզվում:

# Սահմանափակումներ

| Խնդիր | Ժամանակի Սահմանափակում | Հիշողության Սահմանափակում |
|---|---|---|
| Մոլեկուլների ճանաչում (Detecting Molecules) | 1 վայրկյան | 2 GB |
| Ամերիկյան ատրակցիոն (Roller Coaster Railroad) | 2 վայրկյան | 2 GB |
| Շրջանցող ճանապարհ (Shortcut) | 2 վայրկյան | 2 GB |